


891 93 092

14-85



02 DEC 2011

ՄԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ
ԹԵԹԵԻ ԱՊՏԱԿ

ՍՌ

Պ. Ա. ԱԶԱՏԱՆԻԶԵԱՆ

Մ. Պ. ԽՕՐԹՈՒՄՃԵԱՆԷ

Ի ՆՊԱՍՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ



891.99.092

Խ-85

Կոստանդնուպոլիս

1880

Կրկնաթուղթ. Նի. 2. մ. ըստ
Ե. 14485-ը

891.99.092

50.

Խ-85

մե

ՄԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ


ԹԵԹԵԻ ԱՊՏԱԿ

ԱՌ.

Պ. Ա. ԱԶՍՏԱԽՈՂԵԱՆ

Printed in Turkey

Մ. Պ. ԽՈՐԹՈՒՄՃԵԱՆԷ



Ի ՆԱԽԱՅ

Հայաստանի սովետ



Կ. ՊՕԼԻՍ

1880

08.05.2013

83,904
23044

ՄԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

ԹԵԹԵՒ ԱՊՏԱԿ

Printed in Turkey

Ա Ռ

Պ . Ա . ԱԶԱՏԱԽՈՂԵԱՆ

Բարեկամ,

Կարդացի Ձեր « Թուղթ » . նորա ճակատը կենսական և նուիրական խնդրոյ անունը կար . հաւատացէ՛ք , մի ծայրէն միւսը կարդացի շնչաստառ . այնքան եռանդով՝ որքան որ կրքով դրած էք դուք . կը կարծէի թէ՝ ազգային դաստիարակութեան աննպատակ ընթացից մի ուղի գծել , մի նոր և կայուն չաւիղ նշանակել կը փութայիք . կը յուսայի թէ խամբողներն ու ախոռները պիտի քանդէք , նոցա տեղ դաստիարակութեան գաւիթներ պիտի կառուցանէք . . . բայց ո՛րչափ սխալեցայ իմ ակնկալութեանց մէջ . . . չեմ գիտեր , թէ Ս . Հայրը պիտի զիջանի մի հայրական ապտակ ևս տալ Ձեզ . Նորին Սրբազնութիւնը աղաւթ է իւր անձնական մէջ մի շարժմանց մէջ : Խնդիրը՝ որ ըստ ինքեան օգի չափ նօսր է և չ'արժեր իսկ մի լուրջ ուշադրութիւն գերել , եթէ միմիայն Ս . Հօր դէմ լինէր՝ ժամաւաճառ չ'պիտի լինէի այս տեսութիւն խնդրելի Ձէնջ . բայց որովհետեւ ազգային ոգւոյն դէմ զինուած կը տեսնեմ զՁեզ , և զայն աւելի վշտացնելու քան գգուելու կը ձկտիք , հանդուրժել չէ երբէք կարելի . կը ներէք . . .

Միթէ կը կարծէ՞ք , աղնիւ երիտասարդ , թէ դուք անընկեր էք Ձեր այդ սև վիշտերուն մէջ .



2513
39

շատեր կան, որ ոչ միայն զրչով, եղբերորդներով, այլ հոգով կ'ողորան, կը լան ազգային այս տխուր վիճակին վերայ. ոչ միայն ուսեալը, ինչպէս որ էք Գուք, այլ տղէտն ևս՝ որոյ ազգը և աստուածը այն է՝ որ իրեն կուտայ իւր հացը, երբեմն կը ցաւի Ազգին արգահատելի կացութեան վրայ. թողէք մի պահ Ձեր այդ սենեկին մութ խորը. հասարակութեան իւրաքանչիւր խաւերը այցելեցէք, դիտեցէք. Ձեզ կը թողում ըսել, ինչ որ պիտի տեսնէք անդ. ներկայն՝ անցելոյն հակադասութիւնն է. — քոսն տարի-ահա՝ ազգը մի նոր դարուն ողջունելու երջանկութիւնն ունեցաւ. ի՞նչ կը կարծէք, միթէ՞ . . . : Ազգի վերածնունդը՝ դարերու պտուղ է, սիրելիս. թող որ այս ազգը՝ ներքին և արտաքին հաշածանաց՝ բռնութեանց տակ ընկճեալ էր. կարելի՞ է վիթխարի դէպրուց զործը՝ ամիսներու՝ տարիներու մէջ իրականացնել. դուք ևս դիտէք, թէ անկարելի է այդ. թէ խիստ են Ձեր պահանջմունքը. թէ մի առողջ բանականութեան ծնունդ չեն . . . : Գուք ազգաց կեանքը սերտած էք լաւ քան զիս. միթէ տեսա՞ք մի ազգ որ թերեւ քան Հայքս աւելի նպաստաւոր կացութիւն, աւելի ազատ շարժում ունէր, ընել մի յանկարծական ոտտոտում, զոր ընել տալ կը փորձէք ազգասիրաբար, հինդ երկա՛ր դարերու բռնութեանց տակ ընկճուած խեղճ Հայուն. նա հազիւ կը գայ թէ կ'ապրի՛, դուք կուզէք զայն արչաւել տալ կրթութեան կրկէսի խնայաններուն ընթացակից. տե՛ս Գաղղիա, տիեզերաց իսկական ազատ ազգը, ազատութեան նահատակաց պանծալի բնագումարը. կը հեծէ ցարդ ժեզուլիթաց մի անիծեալ ջուկի խարդաւանաց տակ. չկա՞յ միթէ մի հայրենա սէր Գաղղիացի, որ այդ անիծեալի խմբոյն դէմ մի թիւնալից լեզու զործածէ, որով դուք մարդասիր

րաբար խոցոտել կը նկրտիք ազգի ուղին. չկա՞յ, կը խնդրեմ, մի Գաղղիացի, որ զինէ, վառէ այր, կին, ծեր, մանուկ, իւր հայրենիքը պառակտող գաղափարաց դէմ Բայց խոհեմութիւն և բարեխառն վարմունք կը յաղթեն ժամանակին հետ աւելն արդելքներու. կը յիշէ՞ք Ս. Բարթոլոմէոսի տխուր զիչերը, երբ 20000 Գաղղիացի Գաղղիացիի ձեռք մահ ճաչակեց. տե՛ս, նա էր այն Գաղղիան որ այժմ կարծեաց, գողափարաց ազատութիւնը կը յարդէ Եթէ դուք, այդ դարու զաւակն ըլլայիք, եթէ այդ քստմնափուշ ոճրին չեզոք հանդիսակաշներէն մին ըլլայիք, չեմ՝ դիտեր՝ ի՞նչ պիտի ըլլար ձեր ուղեղի վիճակը . . . ցաւալի՛ ստուգիւ :

Ամէն ազգաց կեանքը՝ ունի իւր արատներ, զոր դարեր չեն կարող սրբել, և ոյց յիշատակ հանգէտ մի փարոսի, մեր ապագայ կեանքը զգուշացնել, լուսաւորել պարտի :

Կը վարանիմ, սիրական, այս սուղ տեսութեան մէջ կը փափագիմ Ձեր հիւանդ ուղեղին ախտանք նուիրել. թէ և այլք ևս քան իս ճարտար՝ ողբալով Ձեր էսպէս ողորմելի կացութիւնը, աւելի ազգուհնարքներով պիտի ջանան ձեր կեանքը, ձեր ուղեղը ապահովել այն վտանգին դէմ՝ յոր կը դահալիւծէք զՁեզ . . . աւա՛ղ, թանկազին կորուստ :

Գիտէ՞ք Հայոց կեանքը երեսուն տարի առաջ. ո՞ր կը հաւատար թէ այս ազգը պիտի սթափէր իւր մահահալունջ քունէն, նոր արեւ և նոր կեանք պիտի ողջունէր, ներքին և արտաքին բռնութեանց դէմ ձայն պիտի բարձրացնէր, իւր վրայ ծանրացող բռնաւոր պիտի փշէր, մի կարեւոր տարր պիտի ընէր դինքն իւր հպատակակից ազգաց մէջ . . . : Այսօր ազգը չ'իտրդար. կը շարժի, որքան կը ներեն իւր

ոտքը և բազումները ամրապնդող կաշկանդող չըլ-
թայնեիրը . . . :

Մի՛ կոծէք, սիրելիս, Աղղը շատ Երեմիաներ
ունեցաւ, բաւական է . և միանշամայն մի՛ սպառ-
նայք . այս կարգի խնդիրներ չեն երբէք օրինաւոր
լուծում ունենար կոծով, սպառնալեօք, կշտամբա-
նօք, որոտընդ ոտ ճարճատիւններով . . . : Եթէ էք
իրական Աղատա՛ստէան, եթէ էք ճշմարիտ փրկի-
սօրիայ (*), ո՛յ՛ անուամբ հռչակել զՁեզ . . . չէք
չիկնիր, պարտիր ունենալ Ձեր « անիծեալ » աչաց
տակ անցիլոյն և ներկային վիճակացոյց պատկեր-
ներն . հրճուլք, և թէ մի զգալի և իրական տար-
բերութիւն կը նշմարէք . և ջանաք՝ յաղթելով ամէն
դժուարութեանց, այդ նսրատաւոր տարբերու-
թիւնը բարձրացնել . . . և զգո՛յ՛, զոչէք, եթէ յե-
տադիմութեան, անկման, ասպականութեան մի նշան
կը նախատեսէք : Այս են և այս պարտին ըլլալ մի
պաշտելի իմաստասիրի, մի խեղճական Աղատախոհեանի
պարտքն և իրաւունք . և ոչ թէ նողկալի կշտամ-
բանք, փրոււոյց սպառնալիք, չանթ և կայծակ,
հուր և սուր տեղալ . և որո՞ւ դէմ . է՞ր կը ցատնուք
Ս . Հօր դէմ . միթէ նա՞ մեզ պիտի առաջնորդէ, մի-
թէ չունի՞մք մեք մեզ աչք, լոյս, բանականութիւն,
որ օժանդակեն մեզ ազգային խնդրոց դերբուկ-
ներն հարթել :

Գրեցէք, ճառեցէք, թախանձեցէք . այսպէս կ'ը-

(*) Կրտէք թէ փիլիսոփայական բառարանի հա-
խափորձը ձեր քսակին վրայ չափելով՝ տպագրելու
ձեռնարկած էք, մինչդեռ նոյն հրատարակութեան
առաջին էջերուն մէջ մի նրախտապարտ լեզուաւ
նոյնին ապագրութիւնն ձեր վարպետուհոյն ծախիւք
լինելը կը հռչակէք . կարծեմ հակասութեան մէջ էք,
Պ . Փիլիսոփայ . և թէ երբէք « փիլիսոփայք » կրնան
սկզբան փոփոխութեան ջատագով կանգնիլ :

նեն ամէն ազգաց բարենորոգիչներ . կրտէք թէ շատ
զրած էք ազգային դաստիարակութեան խնդրոյն
նկատմամբ . . . մի՛ գուցէ ձեր սենեկին պատերն
խակ լած չըլլան . ձեր առաջարկութիւնները գեղե-
ցիկ են, բայց դժբաղդարար խոհական, տեսական .
չէք գիտեր ազգին հանգամանքը, վիճակը, դիրքը,
միայն թուղթ մրոտելու կղբաղիք . խիստ բարձրն
կը թուիք, բարեկամ . միթէ թուունին ձաղը կարո՞ղ
է իւր մօր չափ երկար, ուղևորութեան տանել . չէ՞ք
գիտեր Ձեր տան յարկին քիւլին տակ բունող թըւ-
չունը՝ որ իւր ձաղը թուչելու կը փարժեցնէ՝ մեղմա-
բար . բնութեան օրէնքն է այս, ընդ որ խեղճ ազ-
գը չէ կարող անցանել : Գաղղիա է՞ր, Ամերիկա է՞ր
երբեմն, ինչ որ է այժմ . Դուք գիտէք զայս, բայց
մերթ ընդ մերթ հրապարակ կիջնէք ժողովրդեան
« ծախահարութիւնքն » խելու մի սին փառասիրու-
թեամբ . կը խօսիք, որպէս զի խօսին Ձեր վրայօք . . .

Ես շատեր տեսած եմ Ձեզ պէս խրոխտ՝ մի
ամբողջ ազգ կառավարելու դատապարտելի իղձն
սնուցանող թեթև երիտասարդներ . . . բայց գի-
տէ՞ք . . . երեք հոգիէ բաղկացեալ մի ընկերութիւն
վարել չեն յաջողած . . . : Եթէ մի ազգ զՁեզ իւր
զլուխը ունենալու դժբախտութիւնն ունենար . ո՞
գիտէ ի՞նչ խութերու դէմ կոծելով՝ պիտի փշրէիք
նորա կեանք ,

Մի ժամու տեսութիւն է՝ որ խնդրեցի ի Ձէնը,
զոր ինձ շնորհեցիք այսքան վեհանձնութեամբ . ա-
հա մի քառորդ ժամ տակաւին ունիմ, շատ խօսքեր
ունիմ Ձեզ, բայց զբաղմունքս չեն ներեր այժմ . . . :

Կեանք և Մահ . այս է իմ անուն կրտէք . շիտա-
կը շուարած եմ . Աղատախոհեան էք, թէ Կեանք և
Մահ . եթէ Աղատախոհեան էք, ի՞նչ է այս Կեանք

և Մահ . եթէ Կեանք և Մահ էք , ի՞նչ է ա-
տախտհեան անուն :

Ինչ որ ալ կ'երևակայէք ըլլալ , աղաւտ էք ըլլալու ,
բայց գիտցէք որ արտաքին է այդ երևոյթը . միայն
տղայք կրնան խաբուիլ . ինչ որ էք իբրև ներքին
մարդ , նոյնն էք . և ես կը խօսիմ այն ներքին մար-
դուն , որ անխորհուրդ է , գիւրադրգիւ է , ցաս-
կոտ է , վէս և երևակայական է :

Ապրեցէք , սիրական , որպէս զի Ազգն Ձեզմով
տալրի . չնչեցէք որ հայրենիքն Ձեզմով չնչէ . մա՛հ ,
խիտ գիւրին է . մի ակնթարթի մէջ կրնաք ցրտա-
նալ գիւղիկինսն . . . : Ապրիլ և ծառայել . . . , այս
ըլլայ քո նպատակ :

Տակաւին հինգ վայրկեան ունիմ . . .

Մեծատանց դէմ կ'ուղղէք ձեր թիւնաթաւ աւ-
տաքները , սպառնալիք կը տեղայք . . . բայց խ-
ռչ եկաք մեր այս երկիր , մեր այս հողագունտ
սպառնալեաց դարերը անցա՛ն . . . այսօր կը ու-
թիւնը , մի բարեխառն վարմունք՝ աւելի կը գործեն
քան բարդ ի բարդ սպառնալիք . Դուք գիտէք այս ,
և այսու կրկին եպերեկի են Ձեր ընթացք :

Հազիւ ժամանակը աղգային խաւերու մէջ աղ-
գին ճշմարիտ փիլիսոփայից ի վաղուց փափաքած միու-
թիւնն գոյացնել կրցաւ . . . Հազիւ հարուստը՝ աղ-
քատին , վաճառականն՝ մշակին , գէտը՝ տգէտին
մօտեցնել կրցաւ . . . Դուք ձեր հիւանդ երևակա-
յութեան դաղափարաց վատահելով , կը յանդգնիք
անխորհրդաբար այս սուրբ միութեան ցրումն
առթել , եթէ երբէք զՁեզ չճանչնալու դժբախտու-
թիւնն ունենային ազգայինք . . .

Հոգ տարէք Ձեր անձին . . .

Մնաք բարսաւ .
Արկին տեսութիւն :

ԳԻՆ 40 ՓԵՐՆ.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431762

65.907